

Արտաշես Էնֆիաջյան(ց)

Եսայան Վ. Բ.

ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ /Հայաստան, Երևան/
vardanesayan@yahoo.com

Վճռորոշ բառեր՝ Արտաշես Էնֆիաջյան, քաղաքական, հասարակական, տնտեսական գործունեություն, ազգասեր, բարերար

Арташес Энфиаджян(ц)

Esayan V.B.

Институт истории НАН РА (Армения, Ереван)
vardanesayan@yahoo.com

Резюме: Статья рассказывает о политической, общественной и патриотической деятельности одного из известнейших армянских семей начала 19-го века в Тифлисе – Энфиаджянах, в частности о Арташесе Энфиаджяне, который развернул широкую промышленную и финансовую деятельность (производство табачных изделий, основание банков), а также политическую активность (являлся одним из основателей Армянской народной партии).

Ключевые слова: Арташес Энфиаджян, политическая, общественная, экономическая деятельность, патриот, меценат

Artashes Enfiadjian

Esayan V.B.

Institute of History of NAS of RA (Armenia, Yerevan)
vardanesayan@yahoo.com

Abstract: The article tells about the political, social and patriotic activities of one of the most famous Armenian families of the early 19th century in Tiflis - Enfiadjian, in particular Artashes Enfiadjian, who launched a wide range of industrial and financial activities (production of tobacco products, establishment of banks), as well as political activity (he was one of the founders of the Armenian People's Party).

Keywords: Artashes Enfiadjian, political, social, economic activities, patriot, philanthropist

XIX դարի II կեսից սկսած Թիֆլիսի նահանգում և մասնավորապես արևելահայ կյանքի կենտրոն Թիֆլիս քաղաքում բուռն վելք ապրող տնտեսությունում իրենց վճռական դերակատարությունն ունեին հայերը: Տնտեսության շատ ճյուղերում և հատկապես բանկային կապիտալի ոլորտում մեծ ազդեցություն ունեին Բեզիբջանյան, Մանթաշյան, Էնֆիաջյան(ց)¹ և մի քանի այլ նշանավոր հայ ընտանիքներ: Նրանց կապիտալ ներդրումների շնորհիվ տարածաշրջանում մեծ առաջընթաց ապրեցին ոչ միայն ավանդական տնտեսության ճյուղերը, այլև սկիզբը դրվեց Բաքվի նահանգում նավթի արդյունահանմանը: Բանկային, առևտրական և արդյունաբերական կապիտալի մեծ մասին տիրում էին հայերը:

Այդ վիճակը շարունակվեց նաև XX դարի առաջին երկու տասնամյակների ընթացքում:

Էնֆիաջյանները² դեռևս 18-19-րդ դարերից քաղաքական և հասարակական ու ազգանվեր ակտիվ գործունեություն էին ծավալել Անդրկովկասում: Մասնավորապես, հանդիսանալով «Էնֆիաջյան» ֆաբրիկայի հիմնադիրները, որի արտադրանքն արտահանվել է Եվրոպա և Միացյալ Նահանգներ: Համբարձում Էնֆիաջյանը եղել է Թիֆլիսի Վաճառական բանկի հիմնադիրներից մեկը, դումայի պատգամավոր, քաղաքային Հասարակական կառավարչության և Փոխադարձ վարկի ընկերության

¹ Ժամանակի բոլոր արդյունքներում գրվում էր Էնֆիաջյանց, իսկ հետագայում շրջանառվում է նաև Էնֆիաջյան տարբերակը: Երկուսն էլ համագոր են և ճիշտ:

² Ազգանունը ծագել է Էնֆիաճի՝ <<քթախտ պատրաստող և վաճառող>> թուրքերեն բառարմատից, տե՛ս Ավետիսյան Տիգրան, Հայոց ազգանունների բառարան, հեղինակային հրատարակություն, Ե., 2010, էջ 121:

անդամ, ինչպես նաև՝ թիֆլիսյան Վերնատան գլխավոր հովանավորներից մեկը³:

1860-1863 թթ. Համբարձում Էնֆիաջյանի հովանավորությամբ և տնօրինությամբ լույս է տեսել «Կռունկ Հայոց աշխարհի» «բարոյական, բանասիրական, նկարագրական և վիճակագրական» «Նախնի եւ արդի Հայաստանեայց» նվիրված ամսագիրը⁴: Եվ, առհասարակ, Էնֆիաջյանների ողջ գերդաստանը գիտության և մանկավարժության ոլորտում մեծ նվաճումներ գրանցած մասնագետներ է տվել: Մարդարապատի ազգային թանգարանում՝ Հայաստանի Առաջին Հանրապետության հռչակմանը նվիրված ցուցադրության հատվածում, առկա են պատմական փաստեր և բացառիկ ցուցանմուշներ, որոնք փաստում են Էնֆիաջյանների գերդաստանի անցած ուղին: Մրանք այնպիսի փաստեր են, որոնք խոսում են Էնֆիաջյանների ծավալած ազգանպաստ գործերի մասին:

Դեռևս 1855 թ. **Համբարձում Էնֆիաջյանը Թիֆլիսում գլանակի երկու կրպակ ուներ**, (մեկը Երևանյան հրապարակում, Թամամշանի տան առաջին հարկում էր, մյուսը՝ Վելյամինովսկայա փողոցում, Խոջամինասյանի տանը): Մրանք քաղաքում ծխախոտի առաջին քաղաքակիրթ վաճառատեղիներն էին: Հ. Էնֆիաջյանն առաջինն էր, որ զբաղվեց ծխախոտի արդյունաբերական արտադրությամբ: 1866 թ. ապրիլին Թիֆլիսի առևտրական «Վաճառական» հայերեն շաբաթաթերթում, հայտնի կովկասագետ Ալ. Երիցյանը գրում էր. «Կովկասի կողմերը թուրքները բերում են Տաճկաստանից, բայց թանկ լինելու պատճառով գործ է ածվում միայն բարձր և միջին կարգի ժողովրդի մեջը, բայց ստորին կարգի ժողովուրդը, խեղճերը գուրկ են մնում էղ թուրքունից...»⁵:

Նա ուներ ընդարձակ պլանտացիաներ, որտեղ աշխատում էին բազմաթիվ փորձառու համշենահայ ծխախոտագործներ: 1895 թ. Հ.

Էնֆիաջյանը հիմնում է «Միր» ֆաբրիկան, որը 1901-ին վաճառում է ազգակիցներին, իսկ ինքը հիմնում նորը: Նա մեծ հեղինակություն ու հարգանք էր վայելում Թիֆլիսում. 2-րդ գիլդիայի վաճառականը քաղաքային Հասարակական կառավարչության անդամ էր և դումայի պատգամավոր (1864թ.), 1895-ից Փոխարարձ վարկի ընկերության անդամ⁶:

Հոր հիմնած բիզնեսը հաջողությամբ շարունակեց ու որակական նոր աստիճանի բարձրացրեց **որդիներից Արտաշեսը**: Նա ծնվել է Թիֆլիսում 1866 թվականին: Ավարտել է տեխնիկական դպրոցը: Արդյունաբերական տարբեր հիմնարկություններում վարել է մի շարք պատասխանատու ընտրովի պաշտոններ: Եղել է Թիֆլիսի շրջանի ֆաբրիկանտների և գործարանատերերի ընկերության անդամ, Թիֆլիսի բիրժայի նախագահ, կենտրոնական հաշտարար ատյանի նախագահի օգնական, վաճառականների ավագ վաճառականական բանկի վարչության անդամ, Թիֆլիսի առևտրական դպրոցի հոգաբարձության անդամ, Թիֆլիսի Մանթաշյան առևտրական դպրոցի հոգաբարձության փոխնախագահ: Բացի սրանցից, նա Թիֆլիսի արքունական պալատի ընդհանուր ատյանի, ինչպես նաև եկամտային հարկի համար կազմված նահանգական ատյանի անդամն էր⁷:

Ա. Էնֆիաջյանը խորապես ազգասեր մարդ էր: Լինելով Թիֆլիսի քաղաքային խորհրդի պատգամավոր, փոխարարձ վարկի ընկերության անդամ, վաճառականական ատյանի (купеческая камера) ավագի տեղակալ, սակարանային կոմիտեի անդամ, նա միաժամանակ Ալ. Մանթաշյանցի առևտրական դպրոցի հոգեբարձական խորհրդի անդամ էր, 1-ին առևտրական ուսումնարանի հոգեբարձուների խորհրդի անդամ, տեխնիկական և երկաթուղային ուսումնարանի չունևոր աշակերտների օժանդակության ընկերության նախագահ: 1909 թ. Ա. Էնֆիաջյանը հանգուցյալ հորը պատկանող 300 կտոր հայերեն գրքերը նվիրաբերեց «Թրլիսի հայոց բարեգործական ընկերությանը»⁸:

³ Տե՛ս Նորավանք, «21-րդ ԴԱԲ», թիվ 1 (19), 2008, էջ 135,136, 139,140:

⁴ Տե՛ս «Կռունկ Հայոց աշխարհի», խմբագիր Մարկոս Աղաբեկյան, տնօրեն և հրատարակիչ՝ Համբարձում Էնֆիաջյան: Հանդեսի մատենագիտությունը տե՛ս Զեյթունցյան Ա. Ս., «Կռունկ Հայոց աշխարհի» և «Հայկական աշխարհի կռունկ» կամ «Հայկական աշխարհ» ամսագրերի մատենագիտություն» աշխատությունում՝ Ե., 1982, էջ 1-48:

⁵ Տե՛ս Համբարձյան Ա., Ալեքսանդր Երիցյան, Պատմաբանասիրական հանդես, 60-1(179), էջ 181:

⁶ Տե՛ս Устав Тифлиского коммерческого банка, Тифлис, 1913.

⁷ Տե՛ս Անանուն Դ., Ռուսահայերի հասարակական զարգացումը (1870-1900), հ. Բ, Էջմիածին, 1922:

⁸ Տե՛ս <<Ժողովրդի ձայն>>, :

Համբարձում Էնֆիաջանցի «Միր» ֆաբրիկայի հիման վրա 1901թ. Թիֆլիսում ստեղծվեց նույնանուն բաժնետիրական ընկերությունը, որի վարչության նախագահն էր Բ. Եղիազարյանը, անդամներ էին Գ. Տեր-Ասատրյանը և Մ. Անտոնյանը (մեկ տարի անց վարչության անդամներ դարձան Գ. Բայանդուրյանը, Ռ. Գոքինյանը): 500 հազար ռուբլի հիմնադիր կապիտալով այդ ֆիրման արտադրում էր «Ատլաս» մակնիշի ծխախոտ ու զևանակներ, որոնք վաճառվում էին Թիֆլիսի ու Բաքվի սեփական խանութներում: Ընդամենը 79 բանվոր ունեցող այս ֆաբրիկան տարեկան թողարկում էր 750 հազար ռուբլու ծխախոտ⁹:

1912 թ. Թիֆլիսի նահանգում ամենամեծը «Ա. Հ. Էնֆիաջանց» ֆաբրիկան էր, որտեղ քանակով ամենամեծաթիվ (280) բանվորներ էին աշխատում: Այստեղ արտադրվում էր տարեկան 1 մլն ռուբլու ծխախոտ: Ֆաբրիկան թողարկում էր «Սոլիդնիյե», «Ինտելիգենտնիյե», «Էքստրա» անվանումներով ընտիր գլանակներ, որոնք արտահանվել են Եվրոպա և ԱՄՆ¹⁰:

1912 թ. նոյեմբերի 30-ին հայերը 5 մլն ռուբլի հիմնադիր կապիտալով **ստեղծեցին** նաև **Թիֆլիսի Վաճառականական բանկը**¹¹: Հիմնադիրներն էին Թիֆլիսի քաղաքագլուխ Ալ. Խատիսյանը, Ա. Միլյանցը, Ա. Բաղդասարյանը, Մ. Բոգարջյանցը, Հ. Մելյանյանը, Մ. Դոլուխանյանը, **Ա. Էնֆիաջանը**, Մ. Գյուլբենկյանը, Ե. Թյունիբեկյանը, Գր. Համբարդանյանը, Հ. Կամոյանը, Ս. Տեր-Հովհաննիսյանը, Մ. Քալաթարյանը, Մ. Մարախրոսյանցը: Համեմատության համար նշենք, որ այս նույն թվականին վրաց վերնախավը ստեղծեց իր առաջին՝ Թիֆլիսի Ազնվականական հողային բանկը, որի հիմնադիր կապիտալն ընդամենը 147.300 ռուբլի էր:

Ա. Էնֆիաջանը երկար ժամանակ եղել է Թիֆլիսի Քաղաքային Դումայի պատգամավոր: 1905 թվականից ակտիվ մասնակցություն է ունեցել Ռուսաստանի Ժողովրդական ազատության կուսակցության (Կադետների) «Մշակ» թերթի շուրջ համախմբված խմբի (ապագա Հայ Ժողովրդական կուսակցության կորիզն էր) գործունեությանը: Իսկ ավելի ուշ

եղել է Հայ Ժողովրդական կուսակցության հիմնադիր անդամներից և իր ներդրումն է ունեցել այդ քաղաքական ուժի ծրագրերի մշակմանն ու իրականացմանը: Ա. Էնֆիաջանը հատկապես գործուն մասնակցություն է ունեցել ՀԺԿ-ի ծրագրի տնտեսական հատվածի մշակմանը, որում¹² ՀԺԿ-ն հայտարարեց, որ պաշտպանում էր կապիտալի, մասնավոր սեփականության և շուկայական հարաբերությունների գերակայությունը¹³:

Փորձառու գործարար ու տնտեսության գիտակ Ա. Էնֆիաջանը հարազատ կուսակցությանը հորդորում էր, որ շրջահայաց լրջությամբ կշռադատի ստեղծված քաղաքական իրավիճակը: Որդեգրի գործունեության այնպիսի ուղի, որն ամբողջությամբ համապատասխաներ հայության շահերին, կապահովեր նրանց համար խաղաղ ստեղծագործական աշխատանքի հնարավորություններ, զերծ կպահեր անակնկալներից և միշտ հարազատ մնար «եվոլյուցիական ճանապարհով, աստիճանական զարգացման եվ հետզհետե եկող յաղթանակների շնորհիվ»¹⁴:

Խելացի տնտեսագետն ու պատվարժան հայը միաժամանակ համոզված էր և նույնն էլ հորդորում էր իր կուսակիցներին, որ բոլոր հարևանների հետ համերաշխ, խաղաղ աշխատանքը և անկեղծ բարեկամությունը հնարավորություն կտան «պատուով դուրս գալու այն փակուղիից, որի մեջ գտնվում էր հայությունը»¹⁵:

Ա. Էնֆիաջանը հաճախակի հանդես էր գալիս տնտեսությանն ու ֆինանսական բնագավառներին նվիրված շահեկան զեկուցումներով, որոնք տպագրվում էին կուսակցության «Ժողովուրդ» և «Ժողովրդի ձայն» պաշտոնաթերթերում: Բերենք մի օրինակ՝ «Մեր տնտեսական ներկան և ապագայի հեռանկարները»¹⁶: Նա շեշտում էր, որ Հայաստանը ֆինանսական և առևտրաարդյունաբերական ճյուղերում ծանր ժառանգություն է ստացել, որը հնարավոր կլիներ փոխել միայն ֆինանսական խոշոր ներդրումների միջոցով: Իսկ այդպիսի մեծ գումարներ հնարավոր կլիներ

⁹ Տե՛ս Նորավանք, «21-րդ ԴԱԸ», թիվ 1 (19), 2008, էջ 140:

¹⁰ Տե՛ս Նորավանք, «21-րդ ԴԱԸ», թիվ 1 (19), 2008, էջ 138:

¹¹ Տե՛ս Устав Тифлисского купеческого банка, Тиф., 1913.

¹² Տե՛ս «Մշակ», 26 սեպտեմբերի 1917:

¹³ «Ժողովուրդ», 14 օգոստոսի 1918 թ.:

¹⁴ Զթենց Գ., Մեր աշխարհայացքը, տե՛ս <<Ժողովուրդ>>, թիվ 8, 8 սեպտեմբերի 1918:

¹⁵ Տե՛ս նույն տեղում:

¹⁶ Տե՛ս «Ժողովուրդ» № 28, 6 նոյեմբերի 1918:

ունենալ միայն երկրի բնական հարստությունների, ջրային էներգիայի անսպառ քանակության օգտագործմամբ խոշոր արդյունաբերության զարգացնելով: Ինչպես նաև Հայաստան կապիտալի ներհոսքի համար նպաստավոր պայմաններ ապահովելով: Նա անհրաժեշտ էր համարում նաև համապատասխան մասնագետներ պատրաստելն և մտավորականության ողջ ներուժը օգտագործելը¹⁷:

Հայաստանի Առաջին հանրապետության գոյության հենց սկզբից, Ա. Էնֆիաջյանը մյուս բոլոր հայերի նման ոգևորված էր սեփական պետականության ստեղծման փաստով, սակայն կառուցողական ընդդիմության դիրքերից հաճախակի հանդես էր գալիս նաև ՀՀ կառավարության գործունեության քննադատությամբ: Իսկ երբ Հ. Քաջազնունու կազմած Առաջին կառավարությունը հրաժարական տվեց և ՇԿ-ն մաս կազմեց կոալիցիոն կառավարությանը, նա դարձավ ֆինանսների նախարար: Երբ կառավարությունը մեծ ոգևորությամբ Երևան փոխադրվեց, նորանշանակ ֆինանսների նախարար Ա. Էնֆիաջյանը հայտարարեց, որ նոր տարում ներկայացնելու է կայուն պետական բյուջեի նախագիծ և միջոցներ կձեռնարկի սեփական դրամ ստեղծելու ուղղությամբ: Մակայն ոգևորությունը երկար չտևեց, ընդամենը մի քանի շաբաթ: Ժողովրդական նախարարները՝ այդ թվում նաև Ա. Էնֆիաջյանը, ուղղակի լքեցին Երևանը, քանի որ մի կողմից կյանքի պայմաններն էին շատ ծանր՝ նրանք կարոտ էին նույնիսկ սև հացին, քնում էին գետնին և վարժված չէին ոջիլներին, իսկ մյուս կողմից հատկապես Ներքին գործերի նախարար Արամ Մանուկյանի մենատիրական գործունեության պատճառով կային ներքին միջկուսակցական լուրջ տարակարծություններ:

Այնուամենայնիվ Ա. Էնֆիաջյանի քրտնաջան աշխատանքի շնորհիվ ծրագրվեց պետության բյուջեն և մշակվեց համապատասխան օրինագիծ, որը Քաջբերունին¹⁸ ներկայացրեց Հայաստանի Խորհրդարանին: Այդ ծրագիրը կյանքի կոչելու համար խորհրդարանը փետր-

վար 4-ին որոշեց հանձնարարել վարչապետ Քաջազնունուն մեկնել Եվրոպա, այնուհետև Ամերիկա, որպեսզի Հայաստանի իշխանությունների անունից դիմի դաշնակից պետություններին և Ամերիկային ու նրանցից օգնություն խնդրի: Այդ միջոցով թերևս հնարավոր կլիներ սովի ու հիվանդությունների ճիրաններում գալարվող Հայաստանի համար պարեն և առաջին անհրաժեշտության այլ ապրանքներ ներկրել: Ուղևորության ծախսերը հոգալու համար վարձապետին տրվեց 550 հազար ռուբլի վարկ, որը նախատեսված էր Էնֆիաջյանի նախագծում:

Ավելի ուշ՝ փետրվարի 15-ին, երբ վարչապետի պաշտոնակատար նշանակվեց Ալեքսանդր Խատիսյանը, Քաջբերունին մեկնեց Թիֆլիս, որտեղից անգլիական հրամանատարության միջամտությամբ կարողացավ ապրիլ 16-ին վերադառնալ Երևան՝ «իբ հետ տանելով ելեմտական նախարար Արտաշես Էնֆիաջեանը, գիւղատնտես Յ. Փիրալեանը եւ սպայ Ս. Մելիքեանը»¹⁹: Սակայն երբ ընդունվեց հայտնի Մայիս 28-ի ակտը, Ժողովրդական Կուսակցությունը հիմնավորելով, որ այն միակողմանի բնույթ է կրում, չունի Պողոս Նուբարի հավանությունը, չի բխում Հայկական հարցի միջազգային իրավիճակից, չի համապատասխանում հայ ժողովրդի շահերին, հետևաբար չի ընդունում այն և պահանջեց չեղյալ հայտարարել այդ ակտը: Կառավարությունը մերժեց ընդունել այդ պահանջը և հունիս 24-ին ՇԿ-ական չորս նախարարներ Ս. Հարությունյանը, Ա. Էնֆիաջյանը, Գ. Մելիք-Ղարազոյանը և Ք. Վերմիշյանը կառավարության կազմից դուրս եկան, որով և կոալիցիան վերջ գտավ:

Ի վերջո, քաղաքական փոփոխությունների և անկայուն վիճակի պատճառով Ա. Էնֆիաջյանը ստիպված արտագաղթեց և հիմնվեց Բելգիայում: Բրյուսելում նա հիմնեց «Էնֆի» անունով ծխախոտի ֆաբրիկա, որտեղ հիմնականում աշխատում էին բազմաթիվ գաղթական կովկասահայեր²⁰:

¹⁷ Տե՛ս «Ժողովուրդ» № 29, 9 նոյեմբերի 1918:

¹⁸ Գաբրիել Տեր-Հովհաննիսյան (1837-1920), հայ գրող, հրապարակախոս:

¹⁹ Տե՛ս «Ժողովուրդ», 4 հունիսի 1919:

²⁰ Նշենք, որ 1925թ., «Էնֆիից» բացի Բելգիայի մայրաքաղաքում հայերին էին պատկանում ևս չորս ծխախոտարդյունաբերական ձեռնարկություններ Ա. և Հ.Գոյունճյան եղբայրների «Էլմաս», Դ.Մարյանի «Տավրոս», Տ. Մուրադյանի «Կարս», Ա.Մաթոսյանի «Մարուֆ» ֆաբրիկաները:

Ա. Էնֆիաջյանը չհեռացավ նաև քաղաքական կյանքից: Քիչ հետո նրան տեսնում ենք Սևրի մեջ, որտեղ օգոստոսի 10-ին ստորագրվեց հռչակավոր դաշնագիրը, որով ստեղծվում էր Միացյալ Հայաստանը և թվում էր, թե հայության նվիրական երազը իրականություն էր դառնալու: Նա դոկտոր Ներսիսի հետ որպես խորհրդական Ավետիս Ահարոնյանի պատվիրակության մեջ էր և որպես պետա-

կան պաշտոնատար անձ մասնակցում էր Խաղաղության Համաժողովին:

Հայ ժողովրդի ապագայով մտահոգ հաջողակ գործարարը, լավագույն հատկություններով օժտված մարդն ու բարերարն իր մահկանացուն կնքեց 1924 թ. մարտի 4-ին: Նրա կյանքի պատմությունը շատ ուսանելի կողմեր ունի և կարող օգտակար լինել տնտեսական ու բանկային գործով հոտաքրքրվողների համար: